ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ (ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարդարյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի նիստերի անցկացման կարգը (աշխատակարգը) հաստատելու մասին հարցը,

հաշվի առնելով Պալատի կանոնադրության 16.5 կետի 32-րդ ենթակետի պահանջն առ այն, որ *Փաստաբանների պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին՝ հաստատում է Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի անցկացման կարգը (աշխատակարգը),*

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 32-րդ ենթակետի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստերի անցկացման կարգը (աշխատակարգը)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 19-ից:

3. Սույն կարգն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/14-Լ որոշման 3-րդ կետը (նույն կետով հաստատված կարգը):

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

18 դեկտեմբերի 2019թ.
թիվ 24/19-Լ
ք. Երևան